

Ա Ո Ւ Դ Ի Տ Ի Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

25.10.2013թ.

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված կարգի, հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 21.10.2013թ.-ի թիվ 121 կարգադրությունը, Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչությունում (այսուհետ՝ Տեսչություն) անցկացվեց 2013թ.-ի գործունեության համապատասխանության աուդիտ, ներքին աուդիտի բաժնի ներքին աուդիտոր՝ Ն.Կարապետյանի և ուսուցանվող աուդիտոր Հ.Ավետիսյանի կողմից: Աուդիտի աշխատանքներին մասնակից դարձվեց Տեսչության պետ՝ Մ. Մեսրոպյանը:

Աուդիտի հիմնական ուղղությունները.

ա/ Օրենքներին, այլ իրավական ակտերին, ինչպես նաև Տեսչության գործունեությանն առնչվող այլ պայմաններին /պայմանագրերին, գերատեսչական նորմատիվ ակտերին և այլն/ գործունեության համապատասխանության հավաստիացում:

բ/Մարզպետի կողմից հաստատված ժամանակացույցի համաձայն՝ համայնքներում իրականացված ստուգումների, դրանց վերաբերյալ կազմված ակտերի առկայության ստուգում:

Ընդհանուր տվյալներ.

Աշխատանքը կատարեցին Ն.Կարապետյանը և Հ.Ավետիսյանը: Ունեն բարձրագույն տնտեսագիտական կրթություն: Ն.Կարապետյանը ունի ֆինանսական վերահսկողության փորձ և ներքին աուդիտորի որակավորում:

Բաժնում ռիսկի գնահատումը և ներքին վերահսկողությունը

Ըստ ձեռք բերած տվյալների ռիսկը և ներքին վերահսկողությունը գնահատելու համար հիմք ենք ընդունել ՈՒՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ստանդարտը:

Վերահսկողության ռիսկի նախնական գնահատումը թույլ է տալիս եզրահանգելու, որ բաժնի ներքին հսկողության համակարգը՝ բավարար է գործել: Տեսչության գործառույթների վերաբերյալ իրավական ակտերի վերաբերյալ պահանջների կատարումը պահպանված է :

Բաժնի գործառույթների համապատասխանության աուդիտ:

Համապատասխանության աուդիտը նախատեսված է օրենքներին, այլ իրավական ակտերին, ինչպես նաև բաժնի գործունեությանն առնչվող գերատեսչական նորմատիվ ակտերին, պաշտոնի անձնագրերով ամրագրված գործառույթների գործունեության համապատասխանությունն ուսումնասիրելու համար, շեշտը դնելով ներքին հսկողության տարբեր գործընթացների արդյունավետության գնահատման և օրենքների, այլ իրավական ակտերին և պայմաններին Տեսչության գործունեության համապատասխանության վերաբերյալ մարզպետին և ներքին աուդիտի կոմիտեին հավաստիացման համար:

Հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության պետ: Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության պետի պաշտոնը ընդգրկվում է քաղաքացիական ծառայության գլխավոր պաշտոնների խմբի 2-րդ ենթախմբում, պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում է մարզպետարանի աշխատակազմի ղեկավարը: Կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է Տեսչության ընթացիկ գործունեությունը, պատասխանատվություն է կրում օրենքների, այլ իրավական ակտերի պահանջների, պաշտոնի անձնագրով նախատեսված լիազորությունների կատարման համար: Իր գործունեությունն իրականացնում է ղեկավարվելով պաշտոնի անձնագրով սահմանված օրենքներով, գերատեսչական նորմատիվ իրավական ակտերով, մարզպետարանի կանոնադրությամբ, բաժնի կանոնադրությամբ:

Տեսչության պետը մասնակցում է Աշխատակազմի ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը: Վերահսկում է Մարզի համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականության հողերը, սահմանանիշների և գեոդեզիական կետերի պահպանումը: Կազմում է Մարզի հողային հաշվեկշիռը: Վերահսկողություն է իրականացնում Մարզի տարածքում հողաշինարարության, հողօգտագործման և հողի պահպանման նկատմամբ, կանխում, կասեցնում և վերահսկում ապօրինի հողօգտագործումը: Վերահսկողություն է իրականացնում համայնքային սեփականություն համարվող հողերի օգտագործման և օտարման գործընթացների նկատմամբ: Կազմակերպում է ընթացիկ ստուգումներ՝ Մարզպետի կողմից հաստատված ամենամյա ժամանակացույցին համապատասխան՝ ըստ համայնքների՝ համաձայնեցնելով իրավական հսկողության բարձրագույն մարմնի հետ:

Համապատասխանության աուդիտի արդյունքում պարզեցինք՝ Պաշտոնի անձնագրով նախատեսված իրավունքների, պարտականությունների և աշխատանքային ծրագրի կատարման միջև անհամապատասխանություններ չկան:

Հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության գլխավոր մասնագետ: Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության գլխավոր մասնագետի պաշտոնն ընդգրկվում է քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոնների խմբի 1-ին ենթախմբում, պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում է մարզպետարանի աշխատակազմի ղեկավարը: Մասնակցում է բաժնի ընթացիկ աշխատանքների կազմակերպմանը, ծրագրմանը, ղեկավարմանը և վերահսկմանը: Պատասխանատվություն է կրում օրենքների, այլ իրավական ակտերի պահանջները և իրեն վերապահված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ վերազանցելու համար:

Բաժնի գլխավոր մասնագետը մասնակցում է Մարզի համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականության հողերի վերահսկման աշխատանքներին, Մարզի սահմանանիշների և գեոդեզիական կետերի պահպանման վերահսկման աշխատանքներին: Իրականացնում է Մարզի հողերի օգտագործման սխեմաները սահմանված կարգով կառավարության հաստատմանը ներկայացնելու աշխատանքները: Մասնակցում է Մարզի հողային հաշվեկշռի կազմման աշխատանքներին և համայնքային սեփականություն համարվող հողերի օտարման գործընթացների վերահսկման աշխատանքներին: Իրականացնում է մարզի տարածքում հանրապետական և տարածքային հողաշինարարական նախագծերի աշխատանքները:

Համապատասխանության աուդիտի արդյունքում պարզեցինք՝ Պաշտոնի անձնագրով նախատեսված իրավունքների, պարտականությունների և աշխատանքային ծրագրի կատարման միջև անհամապատասխանություններ չկան:

Հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության առաջին կարգի մասնագետ: Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության առաջին կարգի մասնագետի պաշտոնն ընդգրկվում է քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոնների խմբի 2-րդ ենթախմբում, պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում է մարզպետարանի աշխատակազմի ղեկավարը: Մասնակցում է բաժնի առջև դրված գործառույթներից բխող խնդիրների վերլուծմանը և գնահատմանը: Մասնակցում է Մարզի հողերի օգտագործման սխեմաները սահմանված կարգով կառավարության հաստատմանը ներկայացնելու աշխատանքներին: Մասնակցում է Մարզի հողային հաշվեկշռի կազմման աշխատանքներին: Աջակցում է համայնքային սեփականություն համարվող հողերի օգտագործման տրամադրման մրցույթների կազմակերպման և անցկացման գործընթացի աշխատանքներին: Մասնակցում է համայնքների հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների, բնակավայրերի գլխավոր հատակագծերի նախագծերի կազմման աշխատանքներին: Իրականացնում է Տեսչության փաստաթղթային սպասարկումը, ապահովում է փաստաթղթաշրջանառության վարման աշխատանքները:

Պատասխանատվություն է կրում օրենքների, այլ իրավական ակտերի պահանջների, պաշտոնի անձնագրով նախատեսված լիազորությունների կատարման համար: Իր գործունեությունն իրականացնում է ղեկավարվելով պաշտոնի անձնագրով սահմանված օրենքներով, գերատեսչական նորմատիվ իրավական ակտերով, մարզպետարանի կանոնադրությամբ, վարչության կանոնադրությամբ:

Համապատասխանության աուդիտի արդյունքում պարզեցինք՝ Պաշտոնի անձնագրով նախատեսված իրավունքների, պարտականությունների և աշխատանքային ծրագրի կատարման միջև անհամապատասխանություններ չկան:

<<Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ և 9-րդ հոդվածների և ՀՀ Հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի պահանջներով Տեսչության կողմից Մարզի, ժամանակացույցով նշված, համայնքներում իրականացվել են ընթացիկ ստուգումներ և արձանագրված թերությունների վերաբերյալ համայնքների ղեկավարներին տրվել են համապատասխան խորհրդատվություններ և թերությունները վերացնելու համար կազմվել ժամանակացույցեր:

Ժամանակացույցով նշված մնացած համայնքների ընթացիկ ստուգումներն ընթացքի մեջ են, որոնց վերաբերյալ Տեսչության կողմից ներակայացվել է տեղեկանք: Համաձայն ներկայացված տեղեկանքի՝ Ջերմուկի և Գնդեվազի համայնքներում կատարվել են ըստ անհրաժեշտության ստուգումներ, որոնց արդյունքում հայտնաբերված խախտումների համար՝ համայնքների ղեկավարները ենթարկվել են վարչական տույժի:

Աուդիտորներ՝

Ն.Կարապետյան

Հ.Ավետիսյան

Տեսչության պետ՝

Մ.Մեսրոպյան